



**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ**

Մարտի 29-ին, կիրակի, յարութին Տեսոն մերոյ Յիսոսի Քրիստոսի:

Առավոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը, քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, խնկով ու շարականով, Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար մեծահանդես շոգրվ, մատուցելու զատկական հայրապետական սուրբ պատարազը:

Մայր Տաճարը լիբն է ուստավոր բազմությամբ:

Տաճարի աշակողմյան և ձախակողմյան դասերում, անդ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերասուլիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոններությունը և այլ հրավիրյալները:

Մուրը պատարագի Կոմիտասյան երգեցողությունը հաջորդությամբ կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը:

Վեհ, հաղթական ու սրտառուշ հնչում են «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Գովիա երրուսաղէմ զՏէրա մեղեղիները»:

Մուրը սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազնները, վարդապետներ և սարկավագները:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը.

«Յանոն Հօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ: Ամէն»:

«Մեր Սուրբ և Առաքելական Եկեղեցին կուգա մեջի ամենուս ավետելու հրաշափառ հարությունը մեր Փրկչին՝ Յիսոս Քրիս-

տոսի: Այս մեծ ավետիսով, գարուն կիշնե աշխարհի վրա, այս մեծ ավետիսով գարուն կուգա մեր հոգիներուն: Նոր կյանքի սոսափյուն բնության մեջ, նոր կյանքի լուսաբաց մարդկային հոգեկան աշխարհեն ներս:

«Փառք հրաշափառ յարութեան քո, Տէր»:

Քրիստոս, իր ծնունդով և իր քարուությամբ, բայց մանավանդ իր հարությամբ, եղավ «լրումն օրինաց և մարգարիէց»:

Քրիստոսի հարությունը պատմական գերբնական իրողությունն մըն է, մեջի ավանդված Ս. Ավետարանով: Գերբնական եկեղեցերուն մը, որ եկավ հիմքերն հեղաշրջելու մարդկության պատմությունը և նոր իմաստ ու նոր ընթացք տալու անոր: Գերբնական եկեղեցերուն մը, որ նոր շունչը վերանորոգեց մարդոց և ժողովուրդներու հոգիները, լուսավորեց և նոր ուժերով ու շնորհներով լեցուց զանոնք, և բացավ մարդկության առաջ նոր ծանապարհ՝ բարոյական բարձր ըմբռնումներու և ստեղծագործ կյանքի: Վերջին երկու հազար տարիներու ընթացքին, քրիստոնեության մտածումի թափքով, զգացումի շերմությամբ և տեսիլքներու և որոնումներու խոյանքով հորինված բոլոր հրաշալիքները, որոնցմով լեցուն է այսօր աշխարհն ամբողջ, Քրիստոսի աստվածային հարության փառքը կպատմեն: Սակայն, ինչ որ թերևս առավել կարևոր է ու նշանակալից, այն է, թե Քրիստոսի հարությունը դարձած է աղբյուր տևական ապրումներու և ներշնչումներու, հավատավոր մարդոց ու ազգերու ներաշխարհին մեջ: Հարության հրաշքը դարձած է հոգեկան սնունդ և մարդկային կյանքի ոգեբարոյական պայման: Հավատալ Քրիս-

տոսի հարության՝ հոգեկան վիճակն է այդ, ավետարանական ոգեկանությաւը ու բարոյականով լուսափրված մարդուն: Մանավանդ այս իմաստով, այս լուսին ներքն է, որ կիսայտնի մեզի ճշմարտությունը մեծ առաջալի խոսքին. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա. Կորնի. Ժ. 14):

Այսօր, Քրիստոսի հարության ավետիսը մեզի համար Նվիրական հրավեր մըն է հաստատ մնալու մեր նախնյաց հավատքի վեմին վրա և հավատարիմ՝ ավետարանական բարոյականին: Անցյալի մեջ հայ ժողովուրդը, իր կյանքը և իր գոյատևումը իրեւ ազգություն, կպարտի ամեն բան առաջ իր կրոնական հավատքին: Ան կրցավ տոկալ, հաղթահարել պատմության բոլոր արհավիրքները և ամեն նահատակութենե հետո վերածնի, որովհետո ճշմարտապես հավատաց, թե Քրիստոս «մահուամբ զմահ կոխեաց» և «յարեալ ի մեռելոց»: Հայոց պատմության ճանապարհ տևապես տառապանքի ու խաչելության ճանապարհ մը եղավ, որուն ընթացքին հայ ժողովուրդը, բազում անգամներ, իր մահով մահը հաղթեց և մեռելներեն հարություն առավ: Մենք ինչպես չիմաստանք Քրիստոսի հարության, երբ պատմական վավերական ապացուցը ունինք մեր ժողովուրդի վերածնունդին, մեր ժողովուրդի հարության:

Քրիստոսի հարության ավետիսը մեզի համար հրավեր մըն է սուրբ պահելու այդ մեծ հիշատակը իրեւ հոգեկան ապրում, իրեւ մեր հոգիները ներշնչող և բեղմանվորող լուս, իրեւ մեր կյանքին նպատակ և մեր աշխատանքին իմաստ տվող ճշմարտություն, իրեւ մեզ բարոյապես հնդրացնող ու անպարտելի դարձնող ոգեկան ուժ: Քրիստոսի հարության լուսով, մենք պիտի շարունակենք հավատալ հայ ժողովուրդի կյանքի մշտանորդ, ուժերուն և անոր հավերժությամ: Հիսուս այսօր ալ կըս մեզի՝ «Ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք» (Յովի. ԺԴ 20):

Քրիստոսի հարությունը մեր հույսն է, մեր կրան է, մեր հաղթությունն է, մեր ուրախությունն է:

«Փա՛ռ հրաշափառ յարութեան քո, Տէր»:

Քրիստոսի հարության ավետիսը հրավեր մըն է նաև ուղղված բոլոր մարդոց և աշխարհի բոլոր ժողովուրդներուն, որ անոնք ապրին սիրով և խաղաղությամբ: Վասնի Քրիստոսի հարությունը գերագույն հաղթանակն է սիր և խաղաղության Խշանին, սիրո և խաղաղության գաղափարին: Մանավանդ հարության ավետիսով, յարդկային աշխարհի մեջ հայոր ու համատարած կինչ խաղաղության ծայնը և հաշտության ու եղբայրության պատգամը, հորիզոնն հորիզոն:

Խաղաղություն աշխարհաց, սեր ու եղբայրություն մարդոց և ժողովորդոց. ահա հրամայական պատգամը մեր ժամանակներուն, մեր ժամանակ-

ներուն, այո՛, երբ աշխարհակործան պատերազմն ներու ուրվականը կիսովէ կյանքը և նիդը համայն սարդկության: Մենք Պողոս առաքյալի խոսքը պիտի վերծանեինք, մեր օրերու կյանքի պայմաններուն մեջ, ըսեով. Եթէ հարուցյալ Քրիստոսի խաղաղության պատգամը պիտի չկարողանանք կենսագործել աշխարհի վրա, ընդունայն է մեր հավատքը, ընդունայն է մեր քարությունը:

Աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության կենսագործման աստվածահաճո ճանապարհին վրա, բարերար, վճռական դեր կարող են կատարել աշխարհի կրոնքները, հատկապես քրիստոնեական եկեղեցիները: Այս տեսակետեն անշուշտ որ հուսադրիչ և գոտեպնդիչ մեծ երևությ մըն է այն ծիգը, որ ի գործ կրնեն մեծ ու փոքր քրիստոնյա եկեղեցիները, իրարու մերձենալու ավետարանական սիրով և գործակեցնու իրարու հետ փոխադրձ հարզանքով, ի խնդիր քրիստոնեական իդեալներու կենսագործան մարդկային աշխարհի մեջ: Եվ Մենք կնորիհինք, թե այդ իդեալներու գերազումը և իր այժմենությամբ առաջնահերթը խաղաղության իդեալն է, որուն շուրջ պետք է համախմբվին բոլոր եկեղեցիները և բոլոր կրոնքները:

Հայաստանայաց Եկեղեցին ամենաչերմ ուրախությամբ կողջունե համաքրիստոնեական մեծ շարժումը և կրավատա, թե մոտ ապագային կրնա միխթարական իրողություն մը դառնալ քրիստոնյա եկեղեցիներու, բոլոր եկեղեցիներու եղայության լրումը և գործակցությունը, ավետարանական սիրո ոգիով, ամեն Եկեղեցի պահպանելով իր դավանաբանական մտածելակերպը, պատմականորեն ծնունդ առած ու դարձրու հոլվություն զարգացած իր ավանդություններն ու իր կրոնական-ազգային հոգեբանությունը և իր ինքնագլուխ, անզախ ողեկավարությունը:

Աստվածակառուց Ս. Էջմիածնի կատարներն, այս խնիերով ու այս իդերով, ցնծությամբ կավետենք հրաշափառ հարությունը մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսի, համայն հայ հավատացյալ ժողովուրդին, որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի, աղոթելով, որ սուրբ հարության շնորհները առատապես բաշխվին մեր Եկեղեցին և Մեր բոլոր պավակներուն, որպեսպի անոնք շարունակն իրենց առաքելությունը այս աշխարհի վրա, մեր ազգի մեծ լուսավորիչներու անմար ջահը բարձր բռնած իրենց ծեռքերուն մեջ:

Հարուցյալ Փրկչի Խշման Ս. Սեղանի առաջ, կաղոթենք նաև Մեր սրտի բովանդակ շերմությամբ, որ Տէրը անփործ ու բովանդակ պահէ մեր Ս. Եկեղեցին, իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածնը, Մեծի Տան կիլիկի Կաթողիկոսության և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլս Պատրիարքությանց հայոց Աթոռները և օրինե անոնք միասնական սուրբ աշխատանքը և խա-

ղաղու եղայրական գործակցությունը՝ ի պահպասություն և ի հոգաբոր շրջություն հայ հավատացյալ տողովուրդի կյամքու, սասապասդ ի սկզբու աշխարհի սեր պասդուխտ զավակսերու, որուց Եկեղեցին կհայցեն խաստուն, հեռատես և կենարար առաջնորդություն, համրապսում իրենց Եկեղեցական-պազարի կյանքին միուրիան և խաղաղության: Մենք կիավատանք Երուսաղեմի ողջագլուխում ոգիին և կմնանք անոր հավատարիմ բանիվ և գործով, սպասելով նույն վերաբերմունքը և գործեակերպ բոլորներ, ի սեր Եկեղեցին և ապօք: Թեև վերշերս անսպասի կացություններ կպարզվին այդ Եկեղեցաշեն ոգիին հակառակ, սակայն Մայր Աթոռը կմնա հետևողական ու լավատես, ամեն բան վեր պապինելով Աստուծուն ողորմության և հայ ժողովուրդի արդար խոճին:

Եվ արդ, միրեցյալ հավատացյալ զավակներ Մեր, երբ տոնական ուրախությամբ ծեփի կավետենք Բրաչափառ հարությունը մեր Փրկչին՝ Հիսուսի, Մեր աղործն ու մատրանքն է մանավանդ, որ Տերը իր շնորհներով լացնե ծեր սրտերն ու հոգիները բոլոր, և պահե ու պահպան զծեզանիքոր և անվտանգ, խաղաղ ու բարօր:

Սիրելի՛ հավատացյալ զավակներ Մեր, դուք, որ հավաքած եք այս Ս. Տաճարին մեջ և դուք, որ Մեզ կլսեք հետևերեն, լուսաղող Ս. Եջմիածնեն և վերածնած Մայր Հայրենիքնեն, կշնորհավորենք զծեզ բոլորդ քրիստոսի հարության մեծ ավետիսով և հայրական սիրով կաղորեք բոլորդի կյանքի բարօրության և խաղողության համար:

Մանավանդ դուք, հեռավոր պանդուխտ զավակներ Մեր, սուրբ հարության շնորհներով անսասան ու կենդանի պահեցեք ծեր հավատքն ու ծեր հայկական հոգին, ծեր աշքերը միշտ հառած դեպի Հայաստան աշխարհ, Մայր Երկիրը ծեր լուսաբնակ նախնյաց և դեպի լուս խորան Ս. Եջմիածնի, քրիստոսաշեն Մայր Աթոռը ամենայն համար:

«Այսուհետև եղաքը, ողջ լեռուք, խաստատուն կացէք, միթքարեցարուք, միաբան լեռուք, խաղաղութին արարէք և Աստուած խաղաղութեան և սիրու Եղիցի ընդ ծեզ: Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան» (Բ Կորնթ. ԺԳ 11–12), և «Ընդ հաշտութեան Աստուծոյ մի-

մեանց արկցուք գիրկս սիրով և միաբան գոչեցուք Քրիստոս յարնաւ ի մռնելոց» (Եարական):

«Ենորմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Աստուծոյ Եղիցին ընդ ծեզ ամենասին»:

Ամէն: Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Երեմանի պաղուկայանից ձայնասփովում է Վեհափառ Հայրապետի քարոզը:

Հավարա սուրբ պատարագի, Նորին Ս. Օծությունն առաջնորդվում է Վեհարան՝ շոր-էավորւթյուններ ընդունելու:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգեւոր Խորհրդի, Հոգեւոր Ճեմարանի գասախոսական կազմի և ուսանողության ու բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետի զատկական տոնը շնորհավորում է գերաշնորհ Տ. Մահակ արքապիսկոպոսը:

Ապա Նորին Ս. Օծությունը խոսք առնելով, շնորհավորում է Հայ ժողովրդի մեծագույն տոնը՝ Զատիկիը, և օրջնելով բոլոր ներկաներին, բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պայծառության, Մայր Հայրենիքի՝ Սովորական Հայաստանի և Հայ ժողովրդի բարօրության, բարգավաճման, աշխարհի խաղաղության համար:

Երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական իր սեղան մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանության և Հյուրերին:

Վեհարանում, զատկական սեղանների շուրջ, ստեղծվում է ջերմ, Հայկական մթնություն: Ծնորհավորության և բարեմաղթության բաժականառել են արտասանվում Վեհափառ Հայրապետի կենաց, Մայր Աթոռի անսասանության, Մայր Հայրենիքի և Հայ ժողովրդի բարօրության ու բարգավաճման համար:

Խմբովին կրգված Տերութեական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով փակվում է զատկական տոնի հանդիսության նվիրված ընդունելությունը:

Ս. Հարության տոնի առթիվ փոխանակված շնորհավորականները կտրվեն ամսագրի մայիսի համարում— Խմբ.:

